

«Դու զքո որդւոյ ձեռքն բռնելոյ,
երթանք հասնինք՝ թէ պապդ է մեռեալ.
Ես քո որբոյն ձեռքն այսօր կալեալ,
Քո կէնձ մարիկդ սեւ հողով ծածկեալ»:

Սողոմէ կը վախճանի 1690 Դեկտ. 27ին, Ուրբաթ,
ըստ Օրագրութեան Ամդեցիի, որ նոյն օրուան թուա-
կանով կը յուշագրէ. «Երեմիայի կարգած աղջիկն մե-
ռաւ» (թղ. 141ա): Այս տողերէն ալ կը հասկցուի թէ
Երեմիա ունեցած է, Սողոմէէն զատ, մէկ կամ աւելի
դուստրներ, տակաւին չամուսնացած:

Սողոմէ կը թաղուի Բերայի գերեզմանատունը,
համաձայն վերեւ յիշուած թուրքերէն Ողբին հետեւեալ
տողերուն (228 և 229).

«Պէկօղլունն վիրանէլէրն,
Շիմտի պէքճի օլայ կէլտըմ»:

Որբացեալ Յովսէփիկը ենթադրելով 4-6 տարեկան
պատանեակ մը, որ արդէն սկսած էր կարգաւ սորվիլ
(Գանձ, տող 79) և որուն ձեռքէն կը բռնէ եղեր իր պապը՝
Երեմիա Ձէլէպի, իր մայրը Սողոմէ՝ մեռած կը լինի
19-21 տարեկան, իր անդրանիկ եղբօր՝ Գրիգորիս վար-
դապետի վախճանէն տարի մը և եօթը ամիս առաջ:

* * *

Վերջացնելով Երեմիայի ու իր ընտանիքի ան-
դամներու կեանքի մասին մեր տեղեկութիւնները,
հիմա կարգը եկաւ ծանօթացնելու այն Ձեռագրերը,
որոնք աղբիւր եղան մեր այս հրատարակութեան:

Ձէլէպիի Օրագրութեան մանրամասն նկարագրու-
թիւնը տուած ենք արդէն (տե՛ս վերը էջ ԺԱ-ԺԲ):
Ատկէ զատ ունինք երեք Ձեռագրեր, որոնց մէջ ցըր-